ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՈՐԸ ԽԹԱՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ

Աշակերտների ուսումնական մոտիվացիայի խթանման հարցում մեծ դեր է կատարում նաև գնահատումը: Կարևոր է հիշել, որ գնահատումն իր մեջ ներառում է ոչ միայն թվանշանը, որը նշանակվում է երեխային, այլ նաև բանավոր կամ գրավոր հետադարձ կապը, ոչ խոսքային հաղորդակցումը (օրինակ՝ ուսուցչի դեմքի արտահայտություն, ձայնի հնչերանգ) և այլն:

Դիտարկենք մի քանի սկզբունքներ, որոնց վրա հիմնված գնահատում կարող է խթանել աշակերտների ուսումնական մոտիվացիան:

- Գնահատման չափանիշներն ի սկզբանե պետք է **հստակ, հասկանալի և արդար** լինեն երեխաների համար:
- Սովորողներն իրենց **գիտելիքները ցույց տալու տարբեր հնարավորություններ** պետք է ունենան: Երեխաները տարբեր են, նրանց ուսուցման ձևերը ևս, ուստի կարևոր է, որ գնահատումն իրականացվի տարբեր ձևաչափերով (գրավոր, բանավոր, անհատական, խմբային և այլն):
- Առավել կարևոր է **շեշտադրել այն, ինչ լավ է, ճիշտ է**, բարելավվում է, քան մշտապես ընդգծել երեխայի սխալները: Այս իմաստով կարևոր է գնահատել երեխայի ջանքերը, ոչ միայն աշխատանքի արդյունքը:
- Կարևոր է երեխային տալ **հստակ, կոնկրետ (ոչ ընդհանուր), առանձնահատուկ, բովանդակալից հետադարձ կապ**: Ցանկացած հետադարձ կապ իր մեջ պետք է պարունակի տեղեկություն թե դրական, թե զարգացման ենթակա կողմերի մասին:
- **Նվազագույնի հասցնել հրապարակային գնահատումները**, հնարավորության սահմաններում օգտագործել աշակերտների հետ անհատական շփման հնարավորությունը:
- Մեծ նշանակություն ունի երեխայի մոտ **ինքնագնահատման հմտությունների զարգացումը**: Հետևաբար դասապրոցեսի ընթացքում կարելի է ընդգրկել այնպիսի առաջադրանքներ, որ աշակերտը, հիմնվելով ուսուցչի կողմից առաջարկված գնահատման սկզբունքների վրա, սեփական աշխատանքը ստուգելու հնարավորություն ունենա:
- Կարևոր է դասարանում ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ **աշակերտները ևս կարող են գնահատել իրար**: Այդ նպատակով կարևոր է շեշտադրել աշակերտների համագործակցությունը, ոչ թե նրանց միջև մրցակցությունը: Արդյունքում երեխաները կսովորեն շնորհավորել միմյանց և ուրախանալ իրենց դասընկերների հաջողություններով:
- Կարևոր է ընդունել, որ աշակերտների ձախողումները հաճախ ոչ բավարար ջանքերի արդյունք են, ուստի հնարավորության սահմաններում, երեխաները **գիտելիքը ցույց տալու մի քանի հնարավորություններ** պետք է ունենան: Անգամ եթե երեխան այսօր պատրաստ չէր դասին, դա դեռ չի նշանակում, որ այդ թեման իր համար փակված է: Կարևոր է երեխային տվյալ նյութը ներկայացնելու մեկ այլ հնարավորություն տալ:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: